

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՆՏԻՆ, Ապրիլի 14-ը

ՄՈՒԳԱԹՈՒՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԵԿ անգլիական համար տողը 3 ԴՐՁ. ՈՂՁ.
ՄԵԿ անգլիական համար տողը 3 ԴՐՁ. ՈՂՁ.
ՄԵԿ անգլիական համար տողը 3 ԴՐՁ. ՈՂՁ.

ԲԱՇԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԴՐՁ. ՈՂՁ. 100

ՎԵՂԱՄԱՆԱՅ ԴՐՁ. ՈՂՁ. 55

ԵՆԱՄԱՆԱՅ ԴՐՁ. ՈՂՁ. 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՆԵՐՈՒ ԶԱՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԴՐՁ. ՈՂՁ. 26

ՎԵՂԱՄԱՆԱՅ ԴՐՁ. ՈՂՁ. 14

ԵՏ ԶԻՍՏՐՈՒՄ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՁՈՒՄ

ՈՒՂՁ. ԴՐՁ. ՈՂՁ.



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻՆՏԱՐԱԿՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԵՆՐԻԿՈՒՆ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրեն-Խմբագիր Յ. ԱԼՓԻՄԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԶԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԸ

Պ. ՏԵՂԵԱՍԵԻ վերջին յայտարարությունները Երեսփոխանական ժողովոյ բեմէն՝ նոր ոչինչ կ'աւելցնեն գրեթէ այն տեղեկութեանց վրայ զոր արդէն ունէինք Ֆրանսական կառավարութեան մասնաւորապէս Հայկական հարցին նկատմամբ ընդգրկած դիրքին վրայ։ Ֆրանսա անկեղծօրէն համակիր է Հայկական դատին, բայց ուրիշ բան չէ կարող ընել, ներկայ պարագաներուն մէջ, եթէ ոչ մասնակցել Եւրոպական հաւաքական ու պատահական գործողութեան մը ի նպաստ թուրքիոյ ճնշուած բրիտանականներուն։

Ինչպէս որ արդէն առիթ ունեցած ենք ըսելու, այսպիսի գործակցութեան մը իրականացումը մէկ կարելի պարագայի մէջ միայն կը սահմանափակուի։ Այն է թուրք խուժանին կողմէն Պոլսոյ կամ գաւառներուն մէջ Եւրոպական գաղութներու և հաստատութեանց վրայ միահամուռ յարձակում մը, Պոքսէրեան շարժումին պէս։ Բայց այս պատահականութեան գրեթէ անհաւանական նկարագիրը եզականօրէն կը նուազեցնէ Եւրոպական ներդաշնակ համաձայնութեան մը աղօր հեռանկարին գործնական արժէքը։ Ուրեմն, առաջին անգամ, թոյլատրելի պիտի թուէր Պ. ՏԵՂԵԱՍԵԻ յայտարարութիւններէն հետեւեալ որ Ֆրանսական կառավարութեան ընձեռնիք օգտակարութիւնը վերաբերութեամբ Հայկական հարցին լուծման, կը հաւասարի կեդրոնական Եւրոպիոյ Պետութեանց ինկած բաժնին այն չափով որով Պէրլինի չափազանց համբաւաւոր դաշնագիրը, որուն ստորագրած են, պարտականութիւն կը դնէ իրենց վրայ անոր տրամադրութիւնները յարգել տալու Բարձրագոյն Դրան։ Բայց ընտր։

Անվիճելի ճշմարտութիւն մըն է այլևս թէ՛ Հայկական և նոյն իսկ Մակեդոնական հարցերուն լուծումը Ֆրանքօ-Ռուս նիզակակցութեան կամքէն կախում ունի։ Ռուսիա, թէ՛ իբր անմիջական զբաղի թուրքիոյ,

թէ՛ իբր աշխարհիս մեծագոյն զինուորական կայսրութիւնը, անհրաժեշտօրէն սահմանուած է գերակայ դեր մը ունենալ Օսմանեան Պետութեան ճակատագրին յարակից խնդիրներուն կարգադրութեան մէջ։ Արդ, երկու գլխաւոր իրողութիւններ հզօրապէս կը մարտնչին Նիքոլա Բ.ի կառավարութեան մինչև հիմա կիրարկած «սթաթիքս» թաղաքականութեան դէմ՝ վերաբերութեամբ Արևելքի գործերուն։ 1. Գերմանական ազդեցութեան հետզհետէ սպառնական դարգացումը Փոքր-Ասիոյ մէջ և 2. Ֆրանսական հանրային կարծիքին գիտակցութիւնը Արևելքի նկատմամբ։

Այս վերջին իրողութիւնը լուսաւոր կերպով կը ծագի Հայկական հարցին առթիւ Հանրապետութեան խորհրդարանին մէջ եղած հարցապնդումներուն յաջորդող պարագաներէն։ Արդարեւ, ինչպէս կը հետեւի վերջին վիճաբանութեանց տեղեկագրէն զոր գիտենք «Փարոս» ընթերցողները, աննշան մեծամասնութեամբ մըն է որ ընդունուեցան կառավարութեան յայտարարութիւնները։

Միևնոյն երևոյթը տեղի ունեցաւ անկի վրդովիչ կերպով Նոյեմբեր 4ի Երեսփոխանական նիստին մէջ Մարտիկ Սէնպաի բանաձևին ստացած մեծամասնութեամբ և քիչ մնաց որ վախճէր-Ռուսոյի երկարակեաց Դաշնիճը տապալէր եթէ նախարարապետին ազգու միջամտութիւնը իր արդիւնքը չարտադրէր։ Ուստի կարելի է ըսել որ երբ նոյնիսկ կառավարութեան գոյութիւնը խնդրոյ առարկայ կըլլայ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցի մը առթիւ, երբ յեղափոխական ընկերավարական Սէնպա մը, թագաւորական Տընի Քօչէն մը և չափաւոր հանրապետական Տ'Էսթուրնէլ մը — այսինքն՝ Ֆրանսական հանրային կարծիքին երեք գլխաւոր ու ընդգիծողի հատուածներուն համագումարը մարմնացող ներկայացուցիչներ — համաձայն կը գտնուին ի նպաստ թուրքիոյ բրիտանականներուն միջամտութեան խնդրին վրայ, հոտ իրողութիւն մը կայ որ չափազանց ծանրակշիռ նշանակութիւն մը ունի լրջօրէն խորհիլ տալու համար այն բան Բարիկի որքան Բէթրսպուրկի

կառավարող դասակարգներուն, Հետեւաբար թոյլատրելի է նախատեսել որ մանաւանդ այն օրը որ Ֆրանսական ժողովուրդը կատարեալապէս գիտակցի թէ Ֆրանքօ-Ռուս նիզակակցութեան որդեգրած ներկայ ուղեգիծը Արևելքի մէջ՝ ծայրայեղօրէն մահացու է Ֆրանսայի իրական շահերուն, գրեթէ անկարելի պիտի ըլլար ունէ դաշնիճի մը բաւական ներկար ապրիլ կառավարութեան մը հեղինակութիւնը վայելելու համար։ Արդ, ստոյգ է թէ Ֆրանսայի բարեկամութիւնը թէ քաղաքական և թէ երկամտական տեսակէտներով հաւասարապէս անհրաժեշտ է Ռուսիոյ և մինչև հիմա ոչինչ ըրած են ի Բէթրսպուրկ որ Ֆրանքօ-Ռուսական նիզակցութիւնը խախտելու բնութիւնն ունեցած ըլլայ։ Ուրեմն, իրաւունք ունինք ճշմարտամանօրէն ենթադրելու թէ, Ֆրանսական հանրային կարծիքին ստանալու վրայ եղող այս գիտակցութեան հանդէպ, Նիքոլա Բ.ի կառավարութիւնը թերեւս պիտի պարտաւորուի ինքզինքն հարցնելու թէ քաղաքագիտական չէ՞ արդեօք գէթ մարդկութեան ու արդարութեան անհրաժեշտօրէն գծած սահմանին մէջ Ֆրանսայի զիջումներ ընել Արևելքի մէջ, Ֆրանսական կառավարութեան — այսինքն ժողովուրդին — անհրաժեշտ ու օգտակար բարեկամութիւնը տեսականօրէն ապահովելու համար։ Ահաւասիկ ինչու համար ջերմապէս պիտի խնդրէինք մեր Բարիկի բարեկամներէն — մանաւանդ «Բրո Արմէնիա» լարիչ Պարոն Բիէր Գիյեարէն — որ աւելի քան երեք եռանդով բազմապատկէին իրենց ճիգերը Ֆրանսայի ժողովուրդին լուսաւորելու համար Հայկական հարցին և իր ճշմարիտ շահերուն միջև տիրող բացարձակ համաձայնութեան մասին։

Ա. Ճ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՅ ԹԵՐԹԵՐԸ

— Մանչեսթըրէն յունվար 11 թուով (Ն. Տ.) կը գրեն թէ նոյն օրը Մանչեսթըրի ազգայիններու ժողովը իրենց հոգևոր Հովիւ Տ. Թորոս քահանայ Զուլայիցին հրաժարեցուցեր է իր պաշտօնէն։ Այս լուրը վերապահութեամբ կը հրատարակենք,

միևնոյն ատեն անհաւատալի թուելով մեզ թէ Մանչեսթըրի բարեպաշտ ազգայինները տօնական օրերուն հոգևոր միաբարութենէ զրկեն ինքզինքնին։

— Տփլիսի վանքին մայր եկեղեցիի վերանորոգութեան համար 80,000 ռուպլի ծախուէր է, որուն 45,000ը նուիրեր է տեղւոյն Հայ ժողովուրդը, մնացեալ 35 հազար ռուպլին ալ՝ Պ. Ա. Մանթաշեան։

— Ծանօթ Ռուս հայագէտ բրոք. Մառ, որուն երգ երգոցի մեկնութեան վրացերէն թարգմանութեան առթիւ արդէն գրած էինք թէ Հայ մատենագրութեան մասին նպաստաւոր տեսութիւններ յայտնաւորէր, այս անգամ կ'իմանանք թէ զեկտ. 9ին Բեթրսպուրկի համալսարանին մէջ հրապարակաբար լսեցաւ մը պաշտպանած է Հայ գրականութիւնը, սոցթորի առաջնաւոր ստանալու համար։

— Պ. Ա. Մանթաշեանի ծախքով Բարիկ մէջ կառուցուեց Հայոց եկեղեցիին շինութիւնը պիտի սկսուի յառաջիկայ ցարնաւ և պիտի աւարտի 1903 թուականին։

— Արաբիկի առաջնորդ Տ. Մուշեղ վարդապետի գիմումին վրայ՝ Ալիայ թեմը անշատուելով Արաբիկի թեմէն, առանձին վիճակ մը կը կազմէ այսուհետեւ, առաջն տեղապահ ունենալով Տ. Գեորգ վրդ. Ասլանեանը որ չորս ամէս ի վեր հոն կը գտնուի արդէն։ Ալիայ խառն ժողովը այս առթիւ շնորհակալութեան գիր մը ուղղած է Տ. Մուշեղ վարդապետին որ քանի մը տարիէ ի վեր արժանաւորապէս հովուեց նաև իրենց թեմը։

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գալստեան վարժարանի աղջկանց բաժնին շաբաթէ մը ի վեր փակուած ըլլալը իրողութիւն մըն է եղեր զոր մենք անձամբ հաստատեցինք երէկ։

Այս ցաւալի իրականութեան ճշմարիտ պատճառները ստուգելու համար վարժարանին տնօրէնութեան և քաղաքական ժողովի մօտ մեր ըրած գիմումներէն սա գաղափարը կըրցանք կազմել թէ՛ Հոգաբարձութիւնը անխախտ կը մնայ իր «ինատ»ին մէջ և չուզեր պաշտօն տալ Օր. Սօֆի Մանիսալեանի, հակառակ վերջին Ընդհանուր ժողովին մէջ տրուած որոշումին։

Ձեակերպութիւններու անկանոնութիւններ առաջ կը բերուին մեղմացընելու համար հոգաբարձութեան

Գ. Է. ՍԵՂԱՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՖԵՐՈՒ

այս արարքը որուն ինչ արդարա-
ցում ալ տալ ուզուի, մենք քննադատ
և աղետաբեր կը դնենք ազգային
մանկուտն օգտին տեսակէտով:

Մեզ պէս կը մտածէ նաեւ Գաղա-
քական ժողովը բանի որ իր երէկի
նիստին մէջ որոշած է ազգական վար-
ժարանի դռները բանալ երկուշաբթի
առտու նոյն իսկ եթէ հարկ ըլլայ
այդ դռները գոյցը հոգաբարձունքու
երեսին:

Կարծենք թէ ալ ժամը հասած է
վերջ մը դնելու այս կատակերգու-
թեան որ չափէն աւելի տեսցարդէն:

Քաղաքական ժողովին կը մնայ
լուրջ քննութիւն մը բանալ և ապա
որոշել թէ հոգաբարձունքը պէտք
է մնան հոն և կամ Օր. Մանիսա-
լեանը:

Ամեն պարագայի մէջ սակայն,
կիրքերու այդ պայքարին երեսէն
պէտք չէ որ տուժեն վարժարանին
աշակերտները:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Այսօր Գահիրէի սգաւոր երիտասարդու-
թիւնը գլխիկոր հետեւեալ յուշերգաւորու-
թեան մը որ կը տանէր հողին յանձնել
երիտասարդի մը անշնչացիւ մարմինը:

Այն պահուն որ այս տողերը պիտի ե-
րեսին, Գերբովը Յովակիմեան արդէն հանդ-
չած պիտի ըլլայ իր վերջին կայանին մէջ,
օտար աստղերու տակ, իր սիրելիներէն հե-
ռու:

Խեղճ տղայ...

—Այս տարի պիտի ամուսնանամ, կը-
սէր մեզի դեռ ասիէ տառը օր առաջ...

Եւ ո՞վ կրնար երեակայել թէ ու՞ր օր
ետըր այդքան գեղեցիկ ծրագիրներ պիտի
բանդուէին, այդքան յոյսեր պիտի մարկին
և մենք ձեռքովեան զագաղին մէջ պիտի դը-
նէինք երեսուն տարու երիտասարդ մը որ
գեռ շարժած մը առաջ, աշխոյժ և առողջ,
երջանիկ ըլլալու ամեն իրաւունքները ունե-
նալ կը կարծէր:

Նախանձութեան ինչ անգույժ մէկ հեղ-
նութիւնն է այս որ կ'ստիպէ զմեզ իր հարու-
նիքին համար մեր պատրաստած ծաղիկ-
ները՝ արցունքոտ աչքերով, երթալ զետե-
ղել իր զագաղին վրայ...

Ոչ բարեկամներու աղօթքը, ո՛չ եղբոր
մը գործըրանքը և ո՛չ ալ բժիշկներու խը-
նամբը կրցան խել մահու ճիւղներէն այդ
գեռատի երիտասարդը որ այնքան գեղեցիկ
ապագայ մը կը խոստանար:

Գործունեայ ինչպէ՞նք քիչեր կրնան ըլլալ,
պարկեշտ՝ բառին ընդարձակ իմաստով, ազ-
նիւ և իրականակաւ, ահա երկու բառով
պատկերը խեղճ Գերովըին որ հաղել երե-

սուն տարու, սակայն սլափառանք կ'ազ-
դէր իր շուրջը, իր լո՞րջ բնաւորութեամբը
և պատուական ուղեւորներովը:

Գերովըն Յովակիմեանի մահուամբ հայ
երիտասարդութեան կարեւոր անդամներէն մին
է որ կ'անհետանայ և որուն կորուստը խո-
րին ցաւ պիտի պատճառէ բոլոր զինքը
ճանչցողներուն:

Կ'ըմբռնենք այս սե գոյժին՝ հեռուն գրա-
նուղ ծնողացը վրայ ընելիք դառն ազդե-
ցութիւնը և այն անհուն ցաւը զոր այս
մահը կը պատճառէ իր սիրելի եղբոր Տի-
րան Յովակիմեանի որուն կը ներկայացնենք
մեր անկեղծ և համակիր վշտակցութեան
արտայայտութիւնը:

ՏԻՍՐ Ե ՏԻԿԻՆ ԳԵՌՐԻ ՅՈՎԱԿԻՄ-
ԵԱՆ, ՏԻՍՐԻ ՏԻՐԱՆ, ԼԵՒՈՆ Ե ՀԸ-
ՐԱՆՏ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, ՏԻՍՐ Ե ՏԻԿԻՆ
ՏԻՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ, ՏԻՍՐ Ե ՏԻԿԻՆ
ՄԱՐՏԻԿ ՊԵՋՊԵԱՆ, ինչպէս նաեւ
ԱՐԵՆԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ե ՔԻՏԻՔԻՔ-
ԵԱՆ ընտանիքները ցաւ ի սիրտ կը
ժանուցանեն զլուռնաղէտ մահ:

Տ. ՔԵՐՈՎԷԷ Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
իրենց գաւկին, եղբոր, աներձակին,
քեռուրդուոյն և ազգականին որ հողին
աւանդեց երէկ առտու ժամը 1/2 (1 մ.)
յետ կ'աճառէ և տուժանելի հիւան-
դութեան, ի հաստակի 32 տնայ:

Աղէականք և բարեկամք կը խընդ-
րուին ներկայ գտնուիլ յուշարկու-
թեան տխուր հանդէսին որ տեղի
պիտի ունենայ այսօր, Երաբլմ 1
Փետրուար, ժամը 3ին Սուրբ Աստ-
ուածածին եկեղեցւոյ մէջ:

ԿԱՐԳԱՆ «Ձոյգ մը նամակ»ներու
երկրորդը մեր յառաջիկայ երեքշաբ-
թի օրուան թուին մէջ:

ՈՐԲԱՆՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՅՊՈՒՐԱՅԻՆ

ՏԵՐ

Ընկերութեան ընդհանուր ժողովոյ տա-
րեկան նիստը տեղի պիտի ունենայ յառա-
ջիկայ կիրակի 2 Փետրուար, կէս օրէն վեր-
ջը, ժամը 2ին, Առաջնորդարանի ժողովա-
սրահը:

ՕՐԱԿԱՐԳ

1. — Ընթերցում նախորդ նստի ատե-
նագրութեան:
2. — Ընթերցում տարեկան տեղեկագրի
և հաշուեկշիռի Գործ. ժողովոյ:
3. — Նոր ընտրութիւն Ընդհ. ժողովոյ
Դիւանին:

Հիմայ գիտէր, հասկցած էր թէ որչափ
ամեն բան իրեն մէջ այդ բռնիւն կը վե-
րաբերէր, և թէ ինչպէս տառապիլ պէտք
պիտի ըլլար իրեն այդ սէրը իր սրտէն խը-
լելու համար:

Կը մտածէր որ անոր հետ նոր պայ-
քարի մը անձկութիւնները կրելէ և իր
խանդակով հողոյն հնարաւոր նուազումնե-
րուն ենթարկուելէ աւելի լաւ էր իրեն հա-
մար՝ ելլել երթալ... յաւիտեան բաժնուիլ
այդ տունէն:

Սթա Ապուհան իր անգրգոյնի որոշու-
մին մասին լաւ ևս համազօր համար, հա-
մազելու համար զայն թէ բացարձակապէս
անկարող կը գտնուէր այդ կողմէն, այսին-
քէն բռնիւնի գիտելով իրեն օգնութեան
հասնելու, թեքեալ նաեւ խոստովանութիւններ
գրուել թափելու պէտքէն՝ որ ամենէն զգու-

4. — Նոր ընտրութիւն Գործ. ժողովոյ
Դիւանին:

Կը խնդրենք, ՏԵՐ, որ բարեհաճիք ներ-
կայ գտնուիլ սոյն կարեւոր նստին և կա-
տարել ձեր ընկերական պարտականութիւնը:

Ընդհանուր ժողովոյ
Ատենագիր Ատենագետ
Յ. ՍԵԹԵԱՆ Ա. ԱՆԱՆԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐԷՆ

ՁԵՐԱԿԱՆՔՆԵՐ Հրամանագիր ելած է
Թուրք բանակին երեք զօրավարներուն նը-
կատմամբ, Սուլթանին կենաց զէմ դաւադ-
րութեան մը մասնակցած ըլլալուն հետեւ-
նօք, զաւարտութիւն մը որ սակայն դարձ-
եալ չէ յաջողած:

Չօրավարներէն մին անգլիական պահակ
շոգնաւորէն մէկուն մէջ ապստամբելով
ազատեց է:

Երիտասարդ Թուրքներուն մէջէն դարձեալ
ձերբակալութիւններ տեղի ունեցեր են:

ԳԵՐՄԱՆ քարոզիչ Շէօլալթէր Բրիւկեր
նախագահին հետ տեսակցութեան մը միջոցին
այս վերջինը յայտարարեց է թէ համոզ-
ուած է որ Աստուած Թրանսիլի արդար
դատը յաղթանակել պիտի տայ: Գալով
պատերազմի դադարեցնելու համար տէրու-
թեան մը կողմանէ միջամտութեան, Նա-
խագահը ըստ:

«Ամեն ժամանակ երախտագիտութեամբ
պիտի ընդունինք միջամտութիւն մը որով-
հետ առաւելութիւններ ձեռք բերելու չենք
աշխատիր: Հիմայ հանգստութիւն և պատ-
ուար հաշտութիւն մը կը փափագինք:
Եւ եթէ միջամտութիւն մը կարենար, այս
իսկ օր մը միայն պատերազմը կարճեցնել,
զայն երախտագիտութեամբ պիտի ընդու-
նէինք յանուն անոնց որոնց անպատմելի
տառապանքները գոնէ ասով նուազած
պիտի ըլլային:

«Սակայն չը պիտի կարենանք ինքզինք-
նիս երախտագարտ ցուցնել այսպիսի մի-
ջամտութեան մը համար որ մեր անկախու-
թեան պահանջները որեւէ նկատողութեան
չառնէր: Անգլիացիներուն մեզի առաջար-
կածին պէս երբեք հաշտութիւն չպիտի
ընդունինք: «Առաջ հնազանդութիւն և
յետոյ տեսակ մը ինքնօրինութիւն»: Ասի
պիտի համապատասխանէր բրիտանական
չուանը մեր վզին գնել և լսել այս խօսքի-
րը: «Ահաւասիկ այժմ կարող էք մարմին
նիւր, թեքնիւր և սրունքներնիւր շարժել:

չաւոր ու գաղտնապահ կրնան անգամ կը
խեղդէ և կը շարժաւ, խոստովանեցաւ իր
բարեկամութիւնը, հաղորդեց անոր միջև
այն ատեն այնչափ լաւ ծածկուած իր հը-
րայրքին ամօթին և սանձաւոր գաղտնիքը:

—Կը սիրէ՞ք զինքը... կը կրկնէր Սթա
Ապուհա շարժած, կը սիրէ՞ք... ու չէ՞ք
ըսեր...

—Ինչո՞ւ ըսէի... այդ սիրոյն մէջ մի-
թէ ամեն բան առաջուց դատաւարաւորած
չէ՞ր:

—Բայց քանի որ ան ձեզ կը պաշտէ,
քանի որ ամենը կուտայ... իր անունը,
իր հողերը, իր գերեզները զեզոյ ունենալու
համար... Աստուած իմ, ինչ հարկ այդ-
պէս շարժարեւ ինքզինքը, աւերել իր կեան-
քը, երբ մարդ կրնայ իշխանութիւն մը պէս
ապրիլ:

ձեզի ինքնօրինութիւն տուած ենք»: Մեզի
աւելի կամ նուազ հրապուրել եղող տա-
րազ մը հազուեցնել կուզեն, ահա եղելու
թիւնը: Ոչ, լաւագոյն կը սեպեմ լոկ իրա-
ւունքի վրայ յոյս դնելու շարունակելու:

Նախագահը որուն՝ կը հարցուէր թէ Պօ-
կրները իրենց բարեկամներուն ինչ բանի
համար աւելի երախտագէտ կ'ըլլային, ըս-
տակ հաւաքելուն թէ իրաւունքի և արդա-
րութեան ի նպաստ բողոքելուն համար,
պատասխանեց:

Ամենէն առաջ այս երկու բաներուն ըով
քովի գալը ամենամեծ արժէք ունի: Դը-
րամի հաւաքումները անկեղծ շնորհակալեաց
արձանի են, որովհետեւ հակառակ եղած
ճիշդութեան մեծ թշուառութիւն կը տիրէ:

Բայց եթէ իրերը մինչև հիմայ եղածին
նման շարունակուին, կրնանք և մանուկները
ի մօտոյ բնաջինջ պիտի ըլլան և այն ժա-
մանակ դրամական օգնութիւններուն պէտք
չը պիտի լիայ:

ԳԵՐՄԱՆ թերթ մը կը ծանուցանէ թէ
Պէճէքացի կրօնաւոր հայր Պոնկաթը, որ
երկու տարիէ ի վեր Ձին կը գտնուի, ըս-
պանութեւն է Սիա Ինկ Ձինի մէջ: Մինչև
հիմայ մանրամասն տեղեկութիւններ առ-
նուած չեն: Այդ լուրը պաշտօնապէս ծա-
նուցուի է հայր Պոնկաթը ընտանիքին:

ԱՄԵՐԻԿԱՆ «Ուրապուր» մարտնաւին
հրամանատարը Նիւ Չուանկէն կը հեռագ-
րէ իր կառավարութեան թէ նաւալներուն
մէջ կատարեալ կարգապահութիւն կը տիրէ
և թէ վերջին կործանելու կարեւոր բաներ չկան:

ԱՆԿՍՏԱՆԻ Թագուհի Սոֆիան անողջական
վիճակը լաւ է. բարուրդով շարունակա-
կան ըլլալով ապաքինումը մօտաւոր է:
Սակայն, տեղափոխութիւն չպիտի կատար-
ուի և արքունիքը առայժմ Լանտոն պիտի
մնայ: Արքունիքին հանդէսները և ընդունե-
լութիւնները անցեալին պէս չպիտի կա-
տարուին: Այս պարագան արդէն իսկ ծա-
նօթ էր ամեն անոնց, որոնք տեղեկ էին
Լանտոն թագաւորին ճաշակին և պերճա-
սիրութեան, զոր ցոյց տալ կուզէ պաշտօ-
նական հանդէսներու մէջ: Վիլհէլմ Բ.
կայսրն իսկ Անգլիոյ թագաւորին չափ բը-
ծականորէ չէ պատշաճութեան կանոններուն
համար: Ձինուորական ուսնոց մը լաւ չը-
ղուած, շատ լայն կամ շատ նեղ տաբատ
մը, պատշաճ տեղը չըղուած պատուանշան
մը Անգլիոյ թագաւորին աչքէն չեն վրի-
պիր: Օր մը, ճաշի ատեն, սպայ մը ներ-
կայացաւ, որուն բաճկոնին վրայ գտնուած
շքաղարմը հակառակ կողմէն կախուած էր:
Թագաւորը, այն ատեն կայլէսի իշխան,

—Փարքի Սթա Ապուհա, երբ մարդ
կրնա մը կը սիրէ ու կը յարգէ զանի, կ'ա-
մուսնանայ անոր հետ:

—Ո՛հ, ըսաւ Ֆելլա՛ն աղջիկը գայտակ-
ղած, բրէնսը չի կրնար սակայն ձեզ կնու-
թեան անել, օրիորդ:

—Գիտեմ, և որովհետեւ ես ալ չեմ կըր-
նար իր հոմանին ըլլալ, կը տեսնես որ
երբեք չենք կարող համաձայնիլ, աւելցուց
կողկողազին ժպիտով մը որ Սթա Ապու-
հայի աչքերը արցունքներով լեցուց:

—Արդեօք ո՞րչափ կը տառապիք, օրի-
որդ, կը մըմըմը աղջիկը՝ իր անձնական
վիշտը մոռնալով:

—Այո՛, կը տառապիմ, սիրելիս, կար-
ծածէ՞ք աւելի կը տառապիմ. բայց ինքը
չպիտի գիտնայ երբեք և այս է որ կը մը-
խիթարէ զիս: Գոնէ գոհունակութիւնը պի-

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱՌԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ՁԱԳԹԻԹԷԻ ՇԷՆԳԻՆ ԴԷՄ

նշմարեց զայն և չոր շեշտով մը քանի մը յանդիմանական խօսքեր ուղղեց սպային։ Հետեալաբար, զարմանալի չէ որ, Էտուարտ թագաւորը մտադիր եղած ըլլայ նոր փայլ մը տալու արքունիքին հանդէսներուն, ինչ որ սովորական չէր հանգուցեալ թագուհիին օրով։ Վիքթորիա որ շատ բարձր գաղափար մը ունէր թագաւորութեան վրայ, չէր սիրէր պերճանքը ու հանդէսները և կը նախընտրէր երեքմէ նոյն իսկ քաղցքի պարզասիրութիւնը։ Չուզելով գիշերը, երկարատեւ անքուն անցնել, պաշտօնական ընդունելութիւնները ցերեկուան մէջ կը կատարէր, ինչոր կը հարկադրէր արքունիքի կիները, կէս օրէն երեք ժամ յետոյ պաշտօն երթալ հայանի հագուստով, մազերուն մէջ փետուրներ դրած, իբրեւ պարահան, զէս երթային։ Այս տեսարանը կը զբօսցնէր Լոնտոնցիները, որ այլևս անհետացած է։ Այսուհետեւ թագաւորն ու թագուհին, իրիկուան պիտի կատարէն ընդունելութիւնները, մեծ գոհունակութիւն պատճառելով զիւրանգիտական մարմինն, որ շատ կը ձանձրանար ցերեկուան ընդունելութեանց միջոցին։ Փոխանակ թատրոն երթալու ար, քունիքի ընդունելութեանց ներկայ պիտի գտնուէին։ Ասկէ զատ պիտի վերնայ այն հին սովորութիւնը, որով մեծահարուստ Ամերիկացիներ արքունիքի կիներուն կը դիմէին և զրամ խոստանալով անոնց, ինքզինքնին ներկայացնել կուտային, որպէսզի աւելի դիւրաւ մուտք գտնեն անգլիական ընկերութեան մէջ։ Այս փոքր առևտուրը այլևս վերջ պիտի գտնէ։ Հրապարակուած միայն մարդ պիտի ընդունուի արքունիքին մէջ։ Իրաւ է որ այս անօրէնութիւնը մեծ վիշտ պիտի պատճառէ Չիքսկոյի, Պալմի-ժորի և Ֆիլապպիի մեծահարուստ զեղուհիներուն։ Բայց կարելի չէ տարբեր միջոցի մը դիմել, քանի որ արքունիքին կողմէ եղած հրաւերները արդէն իսկ բազմաթիւ են և անկարելի է նորեր ալ բարգել անոր վրայ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՐԻՉ, 29 Յուն.— Երեսփոխանական Ժողովը ցորեններուն առժամանակեայ ընդունելութեան վերաբերեալ օրէնքը քուէարկեց։

ՀՈՒՄ, 29 Յուն.— Չէքա երեսփոխանը իտալիոյ կողմանէ Եգիպտական պարտուց վարչութեան պատուիրակ պիտի անուանուի։

տի ունենամ յետոյնուելու այն միւս կիներուն հետ զոր կըցած է սիրել մինչև այսօր։ Եթէ մեկնիմ, եթէ ոտքս զիս երթալու, պիտի կրնամ ինքնիրենս ըսել թէ հետս կը տանիմ իր յարգանքը, և թէ իր սրտին մէջ ինծի համար զատ տեղ մը չի նստէ, շատ բարձր, զոր բնաւ ապակաշուծիւն մը չպիտի գայ աղտոյղել։

Սթա Ապուհա շուարած մնացեր էր, զարմանքն անմոռն։ Իր բարեկամուհիին ըզգաստութիւնը և իմաստութիւնը մինչև այն ժամանակ իր տեսած բոլոր բաներէն գերի վեր էին, շատ գերի վեր։

Ժերմէն մեծցած կը թուէր իրեն այն սրտաշարժ ու վեհ եղանակով որով առաջուց կ'ընդունէր զհարեւորութիւնը, այն ցաւով զոր Սթա Ապուհա կը գուշակէր այդ այնչափ անվրդով գեղեցիկ հանճարամտութեան ետեւն։ Ֆելլահ աղջիկը ալ չէր դի-

ԼՈՆՏՈՆ, 29 Յուն.— Մալթայի մէջ իբր պաշտօնական չեզոք իտալերէնի տեղ Անգլիերէնը գործածուելու խնդրոյն վրայ երևան եկած վիճարարութեան միջոցին Պ. Չէմպրէնը ծանոյց թէ ինք պատրաստ էր այդ նպատակաւ հրատարակութեան տըրուած յայտարարութիւնը պաշտօնապէս ետ առնուլ սրովհետեւ ինքը բուն փափաք ունէր առոր իտալիոյ մէջ պատճառած զայրոյթը և վիշտը հանդարտեցնելու։ Երկու երկիրներուն իրարու ունեցած բարեկամութիւնը երկուքին ալ ազգային խորին զգացումներուն մասը կը կազմէ։

Թաուշիկայ ուրբաթ՝ ժողովին պիտի ներկայացուի հինգ միլիոն անգլիական ոսկոյ յաւելուածական նոր վարկի խնդրանք մը պատերազմի ծախքերը զոցելու համար որուն երկու միլիոնը ձեռքով գնման պիտի ծառայէ։

ԲԵՐԼԻՆ, 29 Յուն.— Կայսրը և Կայսրուհին այսօր ընդունեցին Աւստրիոյ-Հունգարիոյ գեղապետը։ Յոյս յայտնեցին որ նորոգ հաստատուած բարեկամական յարաբերութիւնները երթալով աւելի մտերմական պիտի դառնային։ Խոսմակալ Կայսրուհին ցաւ յայտնեց վերջին զեպքերուն մասին և ապագային համար հանգարտութեան ապահովութիւն տուաւ։

Ս. ԲԵՂՐՍՊՈՒՐԿ, 29 Յուն.— Ռուսիա ինքզինք տրանսպիր կը ցուցնէ Չինու կողմանէ Մանչուրիոյ դաշնագրին եղած զբաւաւոր առարկութիւններու մասին զիջում ընելու, սակայն շատ կարեւորութիւն կ'ընծայէ Ռուս-Չինական Պանդայի և Չինաստանի միջև ըլլալից դաշնագրին ստորագրութիւնը ապահովելու։

ԼՈՆՏՈՆ, 30 Յուն.— Ռիւթերի գործակալութիւնը կ'իմանայ որ Հոլանտա հաշտութեան առաջարկութիւն չէ ըրած, միայն շատացած է պատերազմին վերջացումը դիւրացնելից մի քանի զաղափարներ ներկայացնելու փորձ մը ընելով։

Այդ ճամբուն մէջ սրեւ իրական յառաջդիմութիւն տարակուսելի կը նկատուի որչափ որ Պօլսքերը իրենք իսկ հաշտութեան ընելու փափաք յայտնած չըլլան։

Նոր Չինաստացի 500 զինուորներ այսօր ճամբայ ելան, 500 ալ փետրուար 8ին պիտի մեկնին ու գործօն պատրաստութիւն ներ կը տեսնուին 1000 հոգի ևս ճամբայ հանելու համար։

«Տըպլին Ֆըրիլըս»ի Բրդ. գումարտակը Տըպլանէն Ասէն մեկնեցաւ։

տէր թէ ինչ մտածէ. ինչ զգացման որոշում տայ. սքանչալուով և գովքը հաւատարապէս կը տրէին իր սրտին մէջ։ Կը հասկնար որ այդ մատաղատի աղջիկը որ իրմէ հագել թէ քիչ մը աւելի տարեց էր, բայց որ տառապանքներով և խորհրդածութեամբ հասունցած էր, ուրիշներուն նման կը գուշակէր որ ան գերագոյն էութիւն մը, աւելի ուրբ բնոյթ մը ունէր, և կը հասկընար որ Ժերմէն այլևս անկարելի էր որ նորէն միջամտութիւն մը ստանձնէր։

— Ինծի նայեցէք, ըսաւ անոր, պիտի փսրձեմ բախտս նորէն բարեւոյթի. կարծեմ թէ կրնամ յաջողիլ առանց ձեր օգնութեան, և ասի երկուքին համար ալ աղէկ կ'ըլլայ։

Վասն զի անբաւելի յանցանք մը կը համարիմ ինծի ձեր զգացմանը հակառակ դիմումի մը պարտաւորել ձեզ։

Բայց Ժերմէն որ վայրկեանէ մը ի վեր

ԲԵՂՐՍՊՈՒՐԿ, 30 Յուն.— Օրանժի հիւսիս-արեւելակողմը դանուղ Տըվէթի զօրապետներուն սր և է հանգիստ չին ձգեր որպէս զի իրենց համաձայնութեամբ արգելին։

ԼՈՆՏՈՆ, 30 Յուն.— «Ինչպիսի» Բէլքինէն կ'իմանայ որ Կայսրուհին անհուն սիրտով զգացեր է և մեծապէս կը յաղթանակէ որովհետեւ երեքշաբթի օրը ամբողջ զեռարանական մարմինը զինքը Չինու իր անմիտելի տէրը ճանչցեր է։

Ծովային նախարարութիւնը 100 ոտք երկայնութեամբ նոր ձեւով ընդծովեայ շոգենաւի մը շինութիւնը հրամայեց։ Այս շոգենաւը թագադրութեան առթիւ տեղի ունենալից մեծ նաւահանգիստի ամենէն շահեկան առարկան պիտի ըլլայ։

ԼՈՆՏՈՆ, 30 Յուն.— Կալէսի իշխանը վերադարձաւ։

ԼՈՆՏՈՆ, 30 Յուն.— Հոլանտական ծանուցագրին Մեծն Բրիտանիոյ կողմանէ տրուած պատասխանը վաղը Լահէյ պիտի հասնի և յառաջիկայ շաբաթուրէն առաջ հրատարակութեան չի պիտի տրուի։

Ռեյնլէի գործակալութիւնը կ'իմանայ թէ յիշեալ պաշտօնագիրը գաղափար կը յայտնէ ազատ անցագիր տալ վերջէն որոշուելից յանձնախումբի մը անդամներուն որպէս զի ասոնք Պօլսք զօրավարներուն քով երթան և պարզելով անոնց առջև իրաց իրական վիճակը անոնց հետ խորհրդակցին թշնամութիւնները դարեւանելու պատշաճութեան վրայ։ Կը վստահեցնեն թէ առաջարկութեան յանձնախումբի կազմութեան վերաբերեալ մասը անորոշ կը մնայ։ Լորտ Գիչնէրին կարծիքը հարցուցաւ այդ ծանուցագրի մասին։

Բօֆի Ֆոթթայի մօտ ամսոյս 28ին տեղի ունեցած ճակատամարտին կորուստներու ցանկին մէջ կը տեսնուի որ գնդապետ Տիւ Մուլլէն և 8 հոգի սպաննուած, 7 հոգի ալ վերաւորուած են, ամենքն ալ Սըսսէք գնդէն։

ԼՈՆՏՈՆ, 30 Յուն.— Պ. Պալմօր խորհրդարանական կանոններու բարենորոգման ծրագիր մը մատոյց որ կը տրամադրէ աւելորդ ճուղարկութիւններ խորշի, կիւղիցնէ Դալսազահին իշխանութիւնը և անկարգութեանց զէմ վճռուած պատիժները կը բարձրացնէ։

Բանակին համար ձի գնելու պաշտօն ունեցող անձանց զէմ մէջ բերուած կաշառակերութեան ամբաստանութեան մասին ճշմիչ յանձնախումբի տեղեկագիրը կը յայտարարէ թէ ինչ որ ալ եղած ըլլան դատողութեան վերաբերութեամբ գործուած սխալները, սպաններուն զէմ յարուցուած ամբաստ-

անմոռնը կեցած էր, յանկարծ ընդմիջեց զանի։

— Բրենսին չեմ խօսիր. Սթա Ապուհա, բայց կարծեմ թէ անմեղա կերպով կրնամ դիմում ընել իր մօրը. հիմայ ինծի հետ շատ աղէկ կ'ընելի կոր. զիս մինչև այսօր ամենափոքր շնորհ մը չեմ խնդրած իրմէ. ինչու աղաչանքներուս անյոտ պիտի մնայ։

Սթա Ապուհա զուխը ցնցեց։

— Փորձեցէք, օրիորդ, բայց կը վախնամ որ ձեր դիմումը իմիշտ աւելի անօգուտ ըլլայ։

— Ահա կ'երթամ կոր, յայտարարեց Ժերմէն, բոլորովին որոշում տուած։

— Դաջէք... բարեկամուհիս, Աստուած ձայներնիդ լսէ, միմիջեց ֆելլահ աղջիկը որ ամենին մասնակից չէր զատարակութիւն լստահութեան։

տանութիւնները բոլորովին անարգաբանային են։ Տեղեկագիրը կը վերջանայ պատերազմական նախարարութեան ձեռքով հայթաղման ճիւղին հասցէին ուղղեալ խիստ պարտաւոր մը իր անհետախուսութեան նկատմամբ։

Պ. Ռեյնսիման, աղատական, Տիւրքալիի համար երեսփոխան ընտրուեցաւ ազատական Պ. Օլարոյաի տեղ որ հրապարած էր։

ԲՈՒՐԻՉ, 30 Յուն.— Տընորմանտի ծերակուտականը և Զօրավար Տիւպարայի մեռան։

ԼԱՀԷՅ, 30 Յուն.— Խաղաղութեան զեռարանախորհուրդին մասնակցող բոլոր տէրութիւններ ուժ կ'ուտան պատերազմին վերջ մը տալու համար Հոլանտայի կողմանէ Անգլիոյ կառավարութեան մօտ եղած դիմումին։

ԿՍՐԵԻՈՐ ԱԶԴ

Բաժանորդագրութեանց և ծանուցմանց համար դիմել թերթիս մատակարարին առ

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԱՆԵԱՆ

Թղթատարական Տուփ Թիւ 732

ԳԱՀՐԻԷ

Pour les abonnements et les annonces s'adresser à l'Administrateur du journal:

M. SARKIS MIRANIAN

Boîte postale N° 732

Le Caire

Ա. Զ. Դ.

Ստացանք Պ. Աստու Երանանի «Դիւցազնօրէն»ը։ Տար շունչով և հզօր ու պատկերալից ոճով հագնեցողութիւն մը՝ որ երեսւան կուղայ ինքնատիպ բանաստեղծին առջող ու կորովի տաղանդը։ Անոր որ հոս ու հոն, թերթերու մէջ, առիթ ունեցած են կարգաւոր պատանի բանաստեղծին հաւուածներ անշուշտ պիտի փափաքին հաստորի մը մէջ ամփոփուած ունենալ զանոնք։ Այդ գրասէրները, Գահրէի մէջ, կրնան դիմել «Փարոս»ի խմբագրութեան ուր կը գտնուին «Դիւցազնօրէն»ի մէկ և երկու ֆրանքոնց երկեակ տպագրութիւնները։ Իսկ հեռուոր տեղերէ կրնան դիմել ուղղակի հեղինակին։

A. Yardjianian

12, Boulevard Arago Paris

Հանրը իր սենեակն էր, և ուշի ուշով մտիկ կ'ընէր արեւելեան հէքեաթ մը զոր իրեն կ'ընէր թուրքերէն ընդունով մասնաւորապէս այս բանին համար գնուած գեղատի չէրքէզ գերուհի մը։

Պատմութեան ամենէն սրտայայտ մէկ կըտորին վրայ էին ձգելու։

— Այն ատեն, կ'ըսէ գերուհին նուագաւոր բարբառով մը, այն ատեն խալիֆան ստը ելաւ, ահաւոր, թուրը ձեռքը, և ծագակահասակ աղջիկը ծնարագեց ըսելով։

Ժերմէն ներս կը մտնէր, «Հանր» մը, միջեց, կ'ուզէի խօսիլ ձեզի...»

Զօհրա բարկութեան շարժման և ըրաւ. պատմութեան ամենէն աղուր տեղը...»

Սակայն չհամարձակեցաւ ետ դիմել զանի՝ ինքն ալ զբաւուած և աղուրած աղջկանը խորիւր վեհութեան և հաստատմիտ կեցուածքին։

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵՐՈԲԱՆ

Ի. Տ. Ե. Մ. Ի. Ր. Զ. Ե. Ա. Ն.

Ա. Տ. Ա. Ս. Ն. Ա. Ք. Ա. Յ. Զ.

ԲԵՆԱՄԷԼ ՓԱՂԱՅ ԹԻԻ 3 ՕԹԷԼ ԵԼՓԵՐՏՍԻ ԴԵՄԱՅ

Երեւորական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ահալի հիւանդութեանց բուժում։ Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ահաւանբու, ցանքիներու ոսկիէ, պիլուլիսիւնէ, ֆաուլուէ, Ապահով և տոկուն քլօնկալած ոսկի, բլաթին, կայլն, կայլն, Լիստերու հիւանդութեանց զարստում երեւորական և ուրիշ միջոցներով։

